

### ՄԱՍ 3. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել է Ծառայության մարզային գործակալությունների մեթոդաբանական կարողությունների ամրապնդման գործընթացը: Տարածքային վիճակագրության վարման արդյունավետության բարձրացման, վիճակագրության վարման միջազգային չափանիշներին իրազեկ լինելու նպատակով, մարզային գործակալությունների համար կազմակերպվել են սեմինարներ և խորհրդակցություններ:

Շարունակվել են Հայաստանի Հանրապետության մարզերի կտրվածքով վիճակագրական ցուցանիշների բազայի ձևավորման աշխատանքները:

Ծառայության պաշտոնական կայքէջի «Տարածքային վիճակագրություն» բաժնի «Հայաստան» ենթաբաժնում քարտեզային և աղյուսակային պատկերմամբ զետեղվել է Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևան քաղաքի 2012-2014 թվականների վերաբերյալ եռալեզու (հայերեն, անգլերեն և ռուսերեն) վիճակագրական ամփոփ տեղեկատվություն, իսկ «Հրապարակումներ» ենթաբաժնում՝ «Հայաստանի Հանրապետության մարզերը և քաղաք Երևանը թվերով, 2013», «Հայաստանի Հանրապետության մարզերը և քաղաք Երևանը թվերով, 2014», «Հայաստանի Հանրապետության մարզերը և քաղաք Երևանը թվերով, 2015» երկլեզու (հայերեն և անգլերեն) վիճակագրական ժողովածուները, «Ատլաս Հայաստանի Հանրապետությունը մարզերով և քաղաք Երևանով, 2013, 2014, 2015» եռալեզու (հայերեն, անգլերեն և ռուսերեն) վիճակագրական էլեկտրոնային հրապարակումները (որոնցում Հայաստանի Հանրապետության տարածքային վիճակագրության հիմնական ցուցանիշները հրապարակվել են նաև ըստ «Վիճակագրության համար տարածքային միավորների Հայաստանի դասակարգչի» ձևաչափի), ինչպես նաև 11 հրապարակումներ Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր մարզի և Երևան քաղաքի վերաբերյալ: